ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Քաղաքացիական ակտիվ դիրքորոշման պատասխանատվության սեփական տեսակետը պաշտպանելու կարողությունների ձևավորումը գրականության դասերին

Մասնակցի անուն, ազգանունը՝ Խանգալդյան Լուսինե

Դպրոցը՝ Արարատ քաղաքի Ժ.Մկրտչյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց

Դասավանդած առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Արարատ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ

1.1. Քաղաքացիական գիտակցությունը հասարակական հարաբերությունների կարգավորման գործիք.....7

1.2. Քաղաքացիական դաստիարակությունը դպրոցականի արժեհամակարգի ձևավորման բաղադրիչ..... 10

ԳԼՈՒԽ 2.

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1 Դասավանդման մեր փորձից..... 40

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունն իրեն շրջապատող իրականության հետ ակտիվ փոխազդեցության մեջ գտնվող ճկուն համակարգ է: Կեցության նման պայմաններում հասարակությանն անհրաժեշտ են ինքնատիրապետման բարձր մակարդակ ունեցող անհատներ: Քաղաքացիական դիրքորոշումն ամբողջացնում և ինքնագիտակցման և ինքնագնահատման ամենաբարձր աստճանին է հասցնում անձի՝ սեփական որակների դիտարկումը: Այս որակներից շատերը, անշուշտ, ձևավորվում են դաստիարակության բազմաթիվ ձևերի ազդեցությամբ, սակայն ուղղակիորեն դրսևորվում են հենց քաղաքացիականության մեջ, քաղաքացիական դաստիարակությամբ ամբողջանում է անձի ինքնատիրապետումը:

Այսօր համամարդկային խնդիրները պահանջում են արագ արձագանքում առկա մարտահրավերներին, դրանց լուծումների առաջադրում, ինքնակազմակերպում, ուղղորդված փոխգործակցություն: Սակայն միայն քաղաքացիական գիտակցությամբ օժտված անհատն է ունակ ըմբռնելու ժամանակի խնդիրներն ու առաջնահերթությունները, նախաձեռնողաբար ընթանալու դրանց հաղթահարման ու կայացման ճանապարհով:

Այսօր խիստ մեծացել է քաղաքացու պատասխանատու վերաբերմունքը ոչ միայն իր, այլև այն հասարակության նկատմամբ, որի անդամն է ինքը: Բնականաբար, քաղաքացիական գիտակցության ձևավորման հիմքը դրվում է տարրական դպրոցում ամենատարբեր դասագործընթացների ժամանակ, աստիճանաբար: Այդ գործում անփոխարինելի են մայրենիի դասաժամերը. գաղափարական տարբեր դրսևորումներով հագեցած բնագրերը օգնում են կրտսեր դպրոցականին ծանոթանալու հասարակության շերտերին, ճանաչելու և զգալու իրեն սոցիումի անբաժանելի մաս:

Հետազոտության արդիականությունը

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից քաղաքացու կատարելատիպի, նրա քաղաքացիական դիրքորոշման ձևավորման գործընթացի կարևորությամբ, քաղաքացիական գիտակցության մասին

գիտելիքներով, որոնք դեռևս լիարժեք կերպով ներառված չեն կրթության բովանդակության և դրանք արտացոլող փաստաթղթերում. սակավ են այս ուղղությամբ միջառարկայական կապերը, չկա քաղաքացիական դաստիարակության իրականացման մանկավարժական համապարփակ մոդել, սակավ են այդ գործընթացի կառավարման մանկավարժական ուղենիշները: Ուստի քաղաքացիական դիրքորոշման ձևավորման և ինքնագիտակցման որոշակի աստիճանի հասնելու գործընթացի հիմքը պետք է դրվի առաջին պատասխանատու օղակ հանդիսացող տարրական դպրոցում, մասնավորապես մայրենիի դասաժամերին՝ ուսումնական նյութերի յուրացման ընթացքում:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է հիմնախնդրի պատմության, դպրոցի առկա վիճակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա դպրոցականի անձի զարգացման գործընթացում քաղաքացիական դաստիարակության արդյունավետ համակարգի ու մանկավարժական պայմանների ստեղծմանը միտված մեթոդական ցուցումների մշակումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ծանոթանալ քաղաքացիական դաստիարակությանը վերաբերող մանկավարժամեթոդական գրականությանը,
2. վերլուծել քաղաքացիական դաստիարակությանը վերաբերող տեսություններն ու գաղափարները հայ մանկավարժության մեջ,
3. ուսումնասիրել կրթական հաստատություններում անձի քաղաքացիական դաստիարակությանը միտված աշխատանքները, դաստիարակվածության և քաղաքացիական դաստիարակության գնահատման չափանիշները,
4. մշակել դասընթացի միջոցով դպրոցականների քաղաքացիական դաստիարակության իրականացմանը միտված մեթոդական ցուցումներ,
5. բացահայտել դպրոցի ուսուցիչների վերաբերմունքը քաղաքացիական դաստիարակության համատեքստում:

ԳԼՈՒԽ 1.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ

1.1. Քաղաքացիական գիտակցությունը հասարակական հարաբերությունների կարգավորման գործիք

Քաղաքացիական գիտակցությունը անձի մեջ ձևավորված որակների, արժեքների և նորմերի ամբողջությունն է: Քաղաքացիական որակների թվին են դասվում խղճի զգացումը, պատասխանատվությունը, ինքնաբավությունը և պատրաստակամությունը: Քաղաքացիական արժեքներն են պատկառանքը պետական խորհրդանիշների հանդեպ, կոլեկտիվ շահի գիտակցումը, փոխզիջումների հակվածությունը, վստահությունը օրենքի նկատմամբ: Քաղաքացիական նորմերի շարքին են դասվում իրավաչափ վարքը, քննական մոտեցումը, գործելու պատրաստակամությունը, գիտակցված ընտրությունը:

Մ. Մամարդաշվիլին գտնում էր, քաղաքացիական գիտակցությունը սեփական գիտակցության բարձրացումն է այն մակարդակին, որը ծառայում է մարդկությանը[1]: Յ. Ռեզնիկը գտնում էր, որ քաղաքացիական գիտակցությունը պետության և ժողովրդի շահերի առաջնահերթության գիտակցումն է սեփական շահերից, որը զուգորդվում է ժողովրդավարական արժեքներով[2]:

Յ. Կրասինը, առաջնահերթություն տալով իրավական բաղադրիչին, քաղաքացիական գիտակցությունը համարում է մարդկանց կողմից որպես հասարակության անդամ սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցումը[3]:

Հասարակության մեջ մշակված գաղափարներով, նորմերով, հայացքներով, իդեալներով որոշվում է անձի քաղաքացիական գիտակցությունը: Քաղաքացիական գիտակցության բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ անձը չի զգում, չի կարողանում տեսնել հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, չի

[1] Мамардашвили М. К., Стрела познания, Сборник, Москва, 2004, ст. 80.
[2] Резни Ю. М., Гражданское общество как феномен цивилизации, Москва, 1998, ст. 32.
[3] Красин, Ю. А., Соотношение «общественного порядка» и «развития»// Вестник института социологии. Москва, 2017, ст. 35.

կարողանում գնահատել սոցիալական երևույթներն ու գործընթացները, հետաքրքրությունները, գործողությունները, վարքը չի կարողանում ներդաշնակել հասարակական շահի հետ:

Քաղաքացիությունը մարդ-պետություն փոխհարաբերությունների սոսկ դրսևորում չէ. այն մարդու համակարգային և համապարփակ որակ է: Սովորողների քաղաքացիական գիտակցության ձևավորման գործընթացի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է երեք գործոններով՝

1) Անձի զարգացմամբ,

2)հասարակական կազմակերպմամբ,

3)համամարդկային ինտեգրմամբ:

Մեր մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունն պայմանավորված է հայաստանյան իրականության հետևյալ առաջնահերթություններով.

- Անձի ձևավորման համակարգում դեռևս հստակ սահմանված և որոշա-կիացված չէ անձի քաղաքացիական դաստիարակության սահմանումը, ընկալումը, դերն ու տեղը. հաճախ այն նույնականացվում է իրավական կամ հայրենասիրական դաստիարակության հետ: Հարկ է հստակ սահմանել քաղաքացիական դաստիարակության դերն ու նշանակությունը անձի զարգացման գործընթացում:
- Արդի հասարակությունը բնութագրվում է ակնառու բազմափեղկվածությամբ, որը փոխադարձ ահանդուրժողականության, երկխոսության բացակայության արդյունք է: Հարկ է՝ հանդուժողականությունը բնութագրել որպես ինտեգրատիվ անձնային որակ, տարակարծիք մարդկանց խնդիրները միահամուռ հաղթահարելու միջոց:
- Ազգային համաձայնությանը մեծապես խոչընդոտում են նաև կրթության բնագավառում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դպրոցին տրված է հասարակությունը բարեշրջելու կարևորագույն հնարավորություն: Այդ շրջանակներում կրթությունը ձգտում է ապահովել անձի քաղաքացիական դաստիարակությունը և ձևավորել անհանդուրժող վերաբերմունք կոռուպցիոն երևույթների նկատմամբ: Ընդ որում, կոռուպցիոն ռիսկերի հանդեպ

անհանդուրժողականությունը սովորողը պիտի սկսի ձևավորել իր իսկ դպրոցի օրինակով:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հայաստանյան իրականության մեջ առկա խնդրահարույց մի շարք հանգամանքներով, որոնք հակասություն են առաջացնում խնդրի տեսական ընկալման և գործնականում առկա իրավիճակի միջև: Մասնավորապես՝

- Հայաստանյան իրականության մեջ թեև բազմիցս շեշտադրվել է քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորությունը, այնուհանդերձ, առ այսօր դեռևս մշակված չէ քաղաքացիական դաստիարակության ազգային հայեցակարգ:
- Բացակայում են ընտանեկան և դպրոցական դաստիարակության գործընթացների շարունակականությունը, համաժամանակյա, համաձայնեցված ազդեցությունը:
- Պետք է փաստել, որ քաղաքական գիտակցությունը դեռևս ներառված չէ կրթության բովանդակության և դրանք արտացոլող փաստաթղթերում, բացակայում են այս ուղղությամբ միջառարկայական կապերը, չկա քաղաքացիական դաստիարակության իրականացման մանկավարժական համապարփակ մոդել, սահմանված չեն այդ գործընթացի կառավարման մանկավարժական ուղենիշները և ձևավորված չէ քաղաքացու ժամանակակից կատարելատիպը:

Քաղաքացիական գիտակցությունը հասարակական հարաբերությունների կարգավորման գործիքից վերաճել է անձի բնութագրական որակի: Մարդը ինքնակարգավորումից թևակոխել է փոխադարձ կարգավորման ժամանակաշրջան, հետևաբար, կարևոր է, որ տվյալ պայմաններում մարդն ընդունի ինքն իրեն և դրսևորի քաղաքացիական գիտակցության դիրքերից: Նման մոտեցումն արտահայտում է քաղաքացու պատասխանատու վերաբերմունքը ոչ միայն իր, այլ նաև այն հասարակության նկատմամբ, որի անդամն է ինքը: Դրանով իսկ, իր հետևողական և գիտակցական կողմնորոշման շնորհիվ անձն ի վիճակի է կանխարգելելու մի շարք արատների անցանկալի դրսևորումները:

Ուսումնասիրելով տարբեր մոտեցումներ՝ հանգում ենք այն մտքին, որ քաղաքացիական դաստիարակությունը շատ ավելի լայն հասկացություն է և իր մեջ ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, ինչպիսիք են սեփական արժանապատվության զգացումը, իր երկրի քաղաքացու նկատմամբ հարգանքը, պարտականությունների կատարման ինքնագիտակցությունը, որոնք նաև հայրենասիրական դրսևորումներ են: Քաղաքացիական դաստիարակության արդյունքը պայմանավորված չէ սոսկ դաստիարակողի անձով, դաստիարակություն իրականացնող ինստիտուտներով: Այստեղ մեծ ազդեցություն ունեն նաև տվյալ հասարակությունում գործող պետական կարգերը, դրանց կառուցվածքը, հասարակության կողմնորոշվածությունը դեպի իրավական, քաղաքական, բարոյական, հոգևոր մշակութային արժեքները, ժողովրդավարության մակարդակը, մարդասիրությունը [4]:

Մինչև քաղաքական դաստիարակության էությանը անդրադառնալը նպատակահարմար ենք գտնում բացահայտել ընդհանրապես դաստիարակության և մասնավորապես քաղաքացիական դաստիարակության նպատակը:

Ժամանակակից գիտական միտքը ունի դաստիարակության բազմակերպ նպատակներ, թեև դրանց միջև տարբերությունը կարող է լինել աննշան՝ մարդու առանձին որակների փոփոխությունից մինչև նրա անձի հիմնովին փոփոխություն: Հենց նպատակների այս բազմազանությունն էլ ապացուցում է հիմնախնդրի բարդությունը:

Քաղաքացիական դիրքորոշումը անձի ինտեգրատիվ որակ է, որն իր մեջ ներառում է գիտելիքների, արժեքների, անձի բարոյական որակների համալիր, որը արտահայտվում է նրա վերաբերմունքով պետության, հասարակության և հենց իր նկատմամբ:

Կարելի է ասել, որ քաղաքացիական դաստիարակության հիմքերն են

1. իրավունքների ճանաչում,
2. պարտականությունների ընդունում և կատարում,
3. պարտավորությունների ընկալում և իրականացում,
4. քաղաքացիական էթիկա:

[4] Давыдов В. В. Российская педагогическая энциклопедия, Москва, 1993-1999, ст. 608.

Ընդհանրացնելով քննարկված դատողությունները և ելնելով սեփական դիտարկումներից՝ իրավունքների ճանաչումը և պարտականությունների ընդունումը մենք դիտարկում ենք որպես անձի իրավական մշակույթի ձևավորման նվազագույն նախապայման: Անձի պարտավորությունների ընկալումն ու քաղաքացիական էթիկան ձևավորում են քաղաքացիական գիտակցություն: Պարտավորությունների ընկալումը կարևոր նշանակություն ունի քաղաքացի ձևավորելու գործընթացում: Պարտավորությունները քաղաքացու կողմից սեփական գիտակցությամբ սահմանված պարտականություններն են, որոնք ամրագրված չեն օրենքով, այլ անձը, գիտակցելով դրանց կարևորությունը, հենց ինքն է դրանք իր համար դարձրել պարտադիր: Ինչ վերաբերում է չորրորդ բաղադրիչին՝ քաղաքացիական էթիկային, ապա այն ենթադրում է հանդուրժողականություն հասարակական կյանքում և անհանդուրժողականություն բացասական երևույթների դեմ, ինչպիսիք են կոռուպցիան, մարդու իրավունքների ոտնահարումը, բռնությունը և այլն:

Ինչպես տեսնում ենք, քաղաքացիական դիրքորոշման ձևավորումը համալիր և ինտեգրված գործընթաց է, որտեղ նպաստավոր ազդեցություն ունեն դաստիարակության բոլոր բաղադրիչները՝ իրավական, ռազմահայրենասիրական, բարոյական, էկոլոգիական, ֆիզիկական, սեռական, աշխատանքային, մտավոր և այլն:

1.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հայտնի է, որ դաստիարակության նպատակի սահմանումը պայմանավորում են մի շարք գործոններ՝ պետական քաղաքականությունը, ազգային գաղափարախոսությունը, որոնք իրենց հերթին կախված են այլ գործոններից՝ հասարակական կարգից, իշխող կուսակցական գաղափարախոսությունից, հասարակության դասակարգային կազմից, մշակույթի զարգացման մակարդակից, փիլիսոփայական և մանկավարժական մտքի նվաճումներից, մանկավարժական համակարգի հնարավորություններից և այլն: Վերը նշված գործոնները, հանգամանքները մեր երկրում փոխվել են: Նույնն է մնացել դաստիարակության նպատակը՝ անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, որը, ցավոք, հնարավոր չէ չափել, ստուգել, գնահատել: Դաստիարակության նպատակը սահմանելու համար անհրաժեշտ է նաև պարզել, թե ո՛րն է մերօրյա հասարակության դաստիարակության իդեալը: Սրանք հարցեր են, որոնք պետք է որոշել: Երկրորդ հանգամանքը, ինչը դարձյալ դժվարացնում է դաստիարակության նպատակի սահմանումը, ոչ ոք չի կարող ասել՝ I դասարանցին 10-15 տարի հետո ինչպիսի՛ հասարակության մեջ է ապրելու: Այս ամենը և, իհարկե, դաստիարակության նպատակի փոփոխության հրամայականը հանգեցրել են այն համոզման, որ ժամանակավորապես պետք է հրաժարվել դաստիարակության ուտոպիական նպատակներից և գտնել մեր ապրած ժամանակին և դաստիարակության մակարդակին համահունչ պրագմատիկ նպատակներ, որոնց իրականացումը հետագայում կնպատակաուղղվի շատ ավելի բարձր նպատակների սահմանման: Սա չի նշանակում իջեցնել այսօրվա դաստիարակության մակարդակը, այլ նշանակում է ճիշտ հաշվել առկա ներուժը և ըստ այդ մշակել զարգացման հեռանկարը: Հասարակական փորձը ցույց է տալիս , որ անհատն ամեն քայլափոխի ստիպված է լինելու ընտրություն կատարել: Հետևաբար, մեր կարծիքով, ժամանակակից դաստիարակության գլխավոր և համակողմանի նպատակը ընտրություն կատարել սովորեցնելն է: Ելնելով վերոգրյալից՝ փորձել ենք սահմանել ուսումնական հաստատություններում դպրոցականի քաղաքացիական դաստիարակության նպատակը: Ուսումնական հաստատությունում իրականացվող քաղաքական դաստիարակության նպատակն է կրթական համապատասխան միջավայրի ստեղծման, անձնական ու հասարակական պահանջմունքների և

ազգային ու համամարդկային արժեքների, ընտանեկան ու հասարակական նորմերի զուգորդման, հումանիստական հարաբերությունների հաստատման միջոցով օգնել դպրոցականին տարբեր իրավիճակներում, հիմնավորված մարդասիրական ընտրություն կատարելու, հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու հմտություններ ձևավորելու գործում:

Ընտանիքը սերտորեն կապված է պետության ու հասարակության զարգացմանհետ և շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող դրական և բացասական փոփոխություններին: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից: Վերջին տարիներին երեխաների դաստիարակության գործում դպրոցին և ընտանիքին առանձնապես մեծ օգնություն են ցույց տալիս տարատեսակ արտադպրոցական ու արտադասարանական խմբակները, արվեստի և սպորտի մասնագիտացված դպրոցները, այդ թվում նաեւ՝ դաստիարակչական աշխա- տանքների կազմակերպման մի շարք կենտրոններ: Այդ նպատակով դպրոցը սերտ կապ է հաստատում հատկապես այնպիսի կառույցների հետ, որոնք իսկապես անում են ամեն ինչ երեխաների դաստիարակության շատ խնդիրների լուծման առումով:

Շատ մեծանուն մանկավարժներ են անդրադարձել ընտանեկան դաստիա- րակության կարևորության հարցին:

Ըստ մեծանուն մանկավարժ Խ. Աբովյանի՝ բարոյական դաստիարակությաննպատակն է աճող սերնդի մեջ պատվաստել լավ քաղաքացու հատկանիշներ, ամենագլխավորը՝ հայրենասիրություն: Լինել հայրենասեր, նշանակում է իմանալ սեփական ժողովրդի պատմությունը, նրա անցյալը, սխրալի դեպքերն ու դեմքերը, ուսումնասիրել նրա մշակույթը՝ լեզուն, գրականությունը, արվեստը, ունենալ ազգային հպարտության գիտակցություն: Մեծահասակներն իրենց կենդանի օրինակով, կուլտուրական նիստ ու կացով, վարվեցողությամբ ու մանկավարժական առողջ սկզբունքներով պարտավոր են հիմք դնել երեխաների ճիշտ դաստիարակության:

Առանց ընտանեկան դաստիարակության՝ ամուր, հիմնավոր չի կարող լինել դպրոցական դաստիարակությունը:

Հետևապես ընտանիքը և դպրոցը երեխաների մտավոր ու բարոյական աճման գործում պետք է նույն նպատակները հետապնդեն և փոխադարձաբար նեցուկ հանդիսանան միմյանց» :

Հայ գրական-հասարակական գործիչներից Մ. Նալբանդյանն այդ առիթով գրել է. «Ընտանիքն առաջին բնական և հարազատ միջավայրն է երեխաների համար: Մեծ է ծնողների պատասխանատվությունը հասարակության առջև իրենց երեխաների դաստիարակության գործում: Աչալրջության բացակայությունը նրանց նկատմամբ կդառնա ծնողների հավիտենական դատապարտության պատճառ, իսկ պարտականությունների գիտակցումը և կատարումը, ընդհակառակը, կհանդիսանա ապահով գրավական նրանց երջանկության:

Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը:

Այսպիսով՝ սովորողների հետ իրականացվող դաստիարակչական գործունեությունը նրանց համակողմանի զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում: Մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ դպրոցում այն կարող է լուրջ ներդրում կատարել հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն ու ֆիզիկական կատարելությունը իրենց մեջ ներդաշնակ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում, որովհետև երեխաների ճիշտ դաստիարակությունից, դրանում ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի գործոնների մանկավարժորեն անթերի գործադրումից է կախված քաղաքացիական հասարակության ապագան:

Հայրենասիրական արժեքների ձևավորումն ու զարգացումը մանավանդ համագործակցային ուսուցման դրույթների կիրառմամբ, խմբային աշխատանքներով տանում են աշակերտի սոցիալականացման: Սոցիալիզացիայի (անձնավորվելու) ողջ ընթացքն ի վերջո հանգում է նրան, որ անհատը անձ է դառնում՝ ձեռք բերելով հասարակական պատմական փորձ, այնուհետեւ իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը:

Սոցիալականացումը հասարակության մեջ և պրակտիկ գործունեությունում անձի սոցիալական վարքի յուրացման և ակտիվ վերարտադրման գործընթաց է և արդյունք: Այն անհատի հարաբերակցումն է սոցիումի հետ, ներգրավումը հասարակական կյանք, կոլեկտիվային վարքի ուսուցումը, ինքնահաստատումը և սոցիալական դերերի իրականացումը: Սոցիալականացում անվանվում է անձնայնացման գործընթացը, նրա ուսուցումը, դաստիարակումն ու տվյալ հասարակությանը հատուկ սոցիալական նորմերի, արժեքների, դրույթների, վարքային մոդելների յուրացումը:

Սոցիալականացումը, լինելով դաստիարակության և ուսուցման հետ միևնույն բովանդակային հարթության վրա, ունի բոլորովին այլ պահանջներ. իր մեջ ներառում է ոչ մտադրված, ինքնաբուխ ազդեցություններ, որոնց շնորհիվ անհատը հարմարվում է մշակույթին և դառնում հասարակության լիիրավ և լիարժեք անդամ:

Մարդու սոցիալական բնութագրիչների ձևավորումը սկսում է ծնված պահից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ստեղծումից: Սոցիոլոգիան մարդուն չի դիտարկում որպես կենսաբանական օրգանիզմ, այլ դիտում է որպես սոցիալական էակ: Առանձնացնում են անհատի սոցիալականացման հետևյալ փուլերը՝

սոցիալական հարմարեցում (ադապտացիա) և ինտերիորիզացիա (սոցիալական նորմերի, օրենքների, կանոնների ընդունում):

Քաղաքացիական դաստիարակության իրականացմանը առավելապես նպաստում են արտադասարանական միջոցառումների կազմակերպումը: Աշակերտը ուզում է ներկայացնել իր եսը: Սակայն ոչ միշտ է, որ կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու ունակությունները, լինել համարձակ՝ հասարակության մեջ իրեն կատարյալ դրսևորելու համար: Ուստի, ինչպես նշել է մեծ մանկավարժ Սուխոմլինսկին, «չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ յուր բազմակողմանի հե- տաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով»: Անշուշտ մեծ է միջոցառումների դերը, որոնք կարող են սեր և ձգտում առաջացնել դեպի ուսումնական գործընթացը: Աշակերտն այդ միջոցառումներից պետք է բավա- բար- ված և ինքնագոհ լինի, այն է՝ միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին, ապրումներին: Միջոցառումները

դառնան դպրոցականի բազմակողմանի զարգացման ու դաստիարակության միջոց, աշակերտը լինի միջոցառման առաջատարն ու պատասխանատուն:

Որպեսզի աշակերտն ապագայում իրեն զգա պետության քաղաքացի, դեռ դպրոցական տարիներից նրա մեջ պետք է ձևավորել ինքնուրույնություն և նախաձեռնելու կարողություն, որոնց կնպաստեն նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները: Իսկ վերջիններս կձևավորվեն արտադասարանական միջոցառումների ժամանակ:

Ժամանակակից դպրոցներում գերագնահատվում է ուսումնական գործըն- թացը՝ ետին պլան մղելով արտադասարանական միջոցառումները: Ուսումնական գործընթացին զուգահեռ պետք է նաև կազմակերպվեն արտադպրոցական միջոցառումներ՝ բազմաբնույթ ձևերով (ցերեկույթներ, միջդասարանային միջոցա- ռումներ, էքսկուրսիաներ, այց պատկերասրահ, շաբաթօրյակներ, բեմականացումներ, գրական-ստեղծագործական քննարկումներ):

Սովորաբար աշակերտներն ուսուցչի կազմած պլանով և ընտրված նյութերով մասնակցում են արտադասարանական միջոցառմանը (մեխանիկորեն վերարտադրելով իրենց հանձնարարված նյութը՝ միապաղաղ ու լարված, միջին և ավագ դասարանի աշակերտները քիչ են մասնակցում միջոցառումներին, որովհետեւ որպես միջոցառման կազմակերպիչներ և անցկացնողներ անտեսվում է աշակերտների դերը: Հիմնականում առաջնորդվում են ուսուցիչների կամ կազմակերպիչների հանձնարարականներով: Լավագույն դեպքում էքսկուրսիայի անվան ներքո կազմակերպում են ընդամենը խնջույքներ բնության գրկում:

Նման պասիվությունն աշակերտների մեջ մեռցնում է հետաքրքրասիրությունը ցանկացած միջոցառման կազմակերպման ու իրականացման ուղղությամբ:

2.2 Քաղաքացիական դաստիարակությանը միտված աշխատանքները

Ցանկացած աշակերտ պետք է ճանաչի իր հայրենիքը, իմանա ՀՀ խորհրդանիշները, իմանա՝ դպրոցի և հասարակական կարգի կանոնները, իր իրավունքներն ու պարտականությունները, նաև հարգի ուրիշների իրավունքները, կարողանա՝ ընդունել մարդկանց միջև գոյություն ունեցող տարբերություններ, իր մտքերը արտահայտել և տարիքին համապատասխան մասնակցել իր կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը, կազմել օրվա ռեժիմ և դրան համապատասխան իր գործունեությունը իրականացնել, տարբերի լավն ու վատը, բարին ու չարը, արդարն ու անարդարը, հարգի և արժևորի աշխատանքը, կարևորի ընկերության և ընկերական հարաբերությունների դերը, ակտիվորեն մասնակցի դպրոցի, դասարանիբոլոր միջոցառումներին:

Հիմնական դպրոցն ավարտողը պետք է կարողանա զուգորդել իրավունքն ու պարտականությունը, պաշտպանել իր իրավունքները, լսել, հարգել ուրիշի կարծիքը, ընտրությունը, որոշումը և ունենա սեփական տեսակետ, համագործակցի այլ մարդկանց հետ, ունենա բանավիճելու, համոզելու, ինքնավերահսկման հմտություններ, գիտակցված ենթարկվի ընդունված կարգերին, ունենա խմբային գործունեություն վարելու հմտություն, քաղաքացիական և իրավական գիտելիքներ, քաղաքացիական գիտակցության, ակտիվ ժողովրդավարական դիրքորոշում, ազգային ինքնագիտակցություն և արժանապատվություն, իմանա պետականության պատմությունը, հասարակական նորմերը և կարողանա բարոյական ընտրություն կատարել և պատասխանատվություն կրել իր վարքագծի համար:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է կարողանա պաշտպանել իր և ուրիշների իրավունքները, հարգել ուրիշների ազատությունը, պատասխանատվություն կրել ընդունած որոշումների և կատարած ընտրության համար, տարբերակել և բացահայտել համաշխարհային գործընթացները, հարգի պետականությունը, ունենա անձնական ազատություն և այլոց ազատության նկատմամբ հարգանք, սեփական արժանապատվություն, միջմշակութային հաղորդակցման մշակույթ, իմանա սահմանադրությունը, իրավական նորմերը և լինի օրինապաշտ, ունենա ձևավորված քաղաքացիական դիրքորոշում և հայրենիք պաշտպանելու պատրաստակամություն:

Այս նպատակներին հասնելու համար մշակվել են անձի քաղաքացիական դաստիարակվածության և ուսումնական հաստատությունում քաղաքացիական դաստիարակության աշխատանքների չափանիշներ, որոնք սահմանում են դաստիարակության որոշակի այն մակարդակը, առանց որի հասնելու չի կարելի դառնալ երկրի քաղաքացի։

Ուսումնական հաստատության քաղաքացիական դաստիարակության աշխատանքի գնահատումը և ապագա քաղաքացու դաստիարակվածության մակարդակի գնահատումը իրականացնելիս պետք է ելնել նրանից, թե որքանով են ուսումնական հաստատությունում ստեղծված պայմանները և մարդկային հարաբերությունները նպաստում անձի ինքնուրույն ընտրություն կատարելուն, որոշում կայացնելուն, ինքնադրսևորմանը, նրա բնածին հակումների, հետաքրքրությունների, պահանջմունքների, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու բավարարմանը, ազատության, պատասխանատվության զարգացմանը, որքանով են նրան օգնում համերաշխ ապրել ինքն իր և ուրիշների հետ, համագործակցել ու հաղորդակցվել միջավայրում, և որքանով է նա իր մտածելակերպով և վարքով պատրաստ ծառայելու իր պետությանը, ընտանիքին ու ժողովրդին։

Այդ նպատակն իրականացնելու համար պետք է դպրոցում ուսումնասիրել՝

- դաստիարակչական ազդեցությունների բնույթը, դրանց համապատասխանությունը սոցիալական պրակտիկային և դրանց նկատմամբ աշակերտների վերաբերմունքը,
- դաստիարակության նպատակին հասնելու համար կազմակերպված գործողությունների համապատասխանությունը և ներդաշնակությունը,
- դաստիարակչական միջավայրի օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցությունների միասնությունը,
- կրթական քաղաքականության սկզբունքների և դաստիարակչական միջավայրի համապատասխանությունը,
- դաստիարակչական գործընթացի բոլոր դերակատարների համակարգված աշխատանքի և յուրաքանչյուրի ակտիվության մակարդակը,

- մանկավարժական շփման և աջակցման բնույթը, մակարդակը և երկուստեք /դաստիարակող-դաստիարակվող/ համագործակցության գիտակցվածության աստիճանը,
- սաների՝ միմյանց և մեծերի հետ շփման, փոխհարաբերությունների բնույթը, գիտակցվածության մակարդակը,
- ուսուցչի, դաստիարակի, դասղեկի, դպրոցի կողմից երեխայի վրա ազդող բոլոր գործոնների արդյունավետությունը,
- դպրոցի ներքին մամուլի ուղղվածության բնույթը,
- աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների ոճը, ձևերը, կոնֆլիկտների լուծման եղանակները,
- դպրոցական և դասարանական կոլեկտիվներում բարոյահոգեբանական մթնոլորտը,
- սովորողների ինքնաճանաչման և ինքնահաստատման մակարդակը, նրանց կողմից հոգևոր, մտավոր, նյութական հետաքրքրությունների և պահանջմունք-ների գիտակցվածությունը և դրանց մասին ուսուցիչների տեղեկացվածու-թյունը,
- դպրոցականների ընդգրկվածությունը արտադասարանական և արտադպրո-ցական աշխատանքներում, նրանց մասնակցությունը և ընդգրկվածությունը մանկական ինքնավարության մարմիններում, հանրօգուտ աշխատանքներում, երեխաների մասնակցությունն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը, նրանց նախաձեռնությունների իրականացման և ստեղծագործականության համար մթնոլորտի առկայու-թյունը,
- աշակերտների ազատության, իրավունքների և պարտականությունների մասին աշակերտության գիտելիքները, դրանց նկատմամբ վերաբերմունքը, դիրքորոշումը և իրացման պատրաստակամությունը։ Այդ ուղղությամբ դպրոցի աշխատանքի ձևերն ու մեթոդները,
- աշակերտների շրջանում օրինախախտումների և հանցագործությունների վիճակը, սեփական վարքի համար պատասխանատու լինելու աշակերտների պատրաստակամությունը և գիտակցվածությունը,

- ազգային ինքնագիտակցության, հայրենասիրական պարտքի, հասարակության առջև պատասխանատվության մասին աշակերտների վերաբերմունքը, պատկերացումները,
- աշակերտների ընդհանուր զարգացման մակարդակը, արժեքային կողմնորոշումները և ուղղվածությունը,
- տարբեր հարցերի և հիմնախնդիրների վերաբերյալ սեփական կարծիք և գնահատական արտահայտելու, որոշումներ կայացնելու, «ոչ» ասելու, ընտրություն կատարելու և դրա հետևանքների համար պատասխանատվություն կրելու՝ աշակերտների պատրաստակամությունը, տարբեր իրավիճակներում նրանց կողմնորոշվելու ունակությունն ու ինքնուրույնության մակարդակը,
- դպրոց-համայնք, դպրոց-ծնող համագործակցության մակարդակը և այդ ուղղությամբ աշխատանքի ձևերը:

Մեր հետազոտության հիմնախնդրի շրջանակներում իրականացրել ենք հարցախույզ, որին մասնակցել է 16 դասվար:

Առաջին հարցին, թե ի՞նչ է քաղաքացիական դաստիարակությունը, ուսուցիչների 70%-ը պատասխանել է, որ քաղաքացիական դաստիարակությունը օրինապահ քաղաքացու ձևավորմանն ուղղված աշխատանքների ամբողջությունն է: Ըստ 30%-ի՝ քաղաքացիական դաստիարակությունը ինքնին պատասխանատու քաղաքացի ձևավորելու գործընթացն է:

2. Մեզ հետաքրքրում էր նաև, թե ո՞ր տարիքից է նպատակահարմար երեխաներին ծանոթացնել «քաղաքացի» հասկացությանը»: Ուսուցիչների 50 %-ը պատասխանել է՝ 6, իսկ մյուս 50 %-ը՝ 8 տարեկանից: Սակայն մենք կարծում ենք, որ պետք է հնարավորինս վաղ տարիքից երեխաների մեջ փորձել սերմանել օրինակելի քաղաքացու որակներ՝ անշուշտ նկատի ունենալով յուրաքանչյուր տարիքի առանձնահատկությունները:

3. Հաջորդ հարցը կազմելիս մենք փոքր-ինչ վարանում էինք, սակայն ուսուցիչների պատասխանները մեզ մտորելու առիթ տվեցին: «Համարո՞ւմ եք արդյոք Ձեզ օրինակելի քաղաքացի» հարցին ուսուցիչների ճնշող մեծամասնությունը՝ 75%-ը, դրական պատասխան է տվել: 12,5 %-ը դժվարացել է պատասխանել: Ոչ պատասխանն է ընտրել ուսուցիչների 12,5%-ը: Միաժամանակ կարծում ենք, որ

բացասական պատասխան տվողները երևի թե ճիշտ չեն հասկացել հարցի բուն էությունը:



Տրամագիր 1

4. «Որքա՞ն հաճախ է պետք կազմակերպել հայրենասիրական թեմաներով միջոցառումներ» հարցին ուսուցիչների 50%-ը պատասխանել է՝ տարին մի քանի անգամ: 18,8%-ը՝ ամիսը 1 անգամ, իսկ 31,3%-ը՝ 2 ամիսը մեկ: Մեր կարծիքով այս թվերը արժանահավատ չեն, միայն մեկ թեմայով տարվա մեջ մի քանի միջոցառում կազմակերպելը ոչ միայն անհնարին է, այլև ճիշտ չէ:



Տրամագիր 2

5.«Ըստ Ձեզ՝ քաղաքացիական դաստիարակությունը ՀՀ-ում ի՞նչ մակարդակի վրա է գտնվում» հարցին ուսուցիչների մեծամասնությունը՝ 86,5%-ը պատասխանել է՝ միջին: 12,5 %-ը պատասխանել է՝ ցածր: Ոչ ոք չի ընտրել «բարձր մակարդակի», ինչը դարձյալ մեզ մտահոգվելու առիթ պետք է տա:



Տրամագիր 3

6.«Որքանո՞վ եք ծանոթ Ձեր երկրի պատմությանը» հարցին ուսուցիչների 62,5%-ը պատասխանել է՝ որոշ չափով: Մնացած 37,5%-ը պատասխանել է, որ շատ լավ ծանոթ է իր երկրի պատմությանը: Կարծում ենք, որ տարրական դպրոցի ուսուցիչները պետք է լավ ծանոթ լինեն հայ ժողովրդի պատմությանը թեմատիկ խմբերի նյութերն ուսումնասիրելիս՝ դասավարումների ընթացքում իրենց գիտելիքները փոխանցելով աշակերտներին :



Տրամագիր 4

7. Մեզ հետաքրքրում էր նաև, թե ուսուցիչների կարծիքով Ի՞նչ է պետք փոխել մեր երկրում այն ավելի քաղաքակիրթ դարձնելու համար»: Այս հարցին ուսուցիչների մեծ մասը պատասխանել է՝ կոռուպցիայի և աղքատության վերացում, ինչպես նաև հնչել են կարծիքներ, որ պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել կրթական համակարգին, անապահովներին անվճար սովորելու հնարավորություն ընձեռել, փոխել քաղաքացիների աշխարհայացքը և աջակցել նպատակասլաց երիտասարդներին: Միաժամանակ հարցման մասնակիցներից ոչ ոք չէր նշել, որ երկիրը քաղաքակիրթ դարձնողը քաղաքացին է, որը պետք է իր քաղաքացիական ակտիվությամբ, գիտակցված ընտրություններով և քաղաքացիական պահանջատիրությամբ նպաստի երկրի զարգացմանը :

8. «Արդյոք արտադասարանական միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպումը նպաստո՞ւմ է աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը» հարցին դասվարների պատասխաններից պարզ դարձավ, որ դեպի պատմական վայրեր այցելությունները ոչ միայն նպաստում են աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, այլև առավել արդյունավետ են դարձնում ուսումնասիրվող թեմայի ու գաղափարի ընկալումը:

Անշուշտ, պարզ է, որ արտադասարանական միջոցառումները նպաստում են սովորողների քաղաքացիական դաստիարակությանը: Սակայն կարևորն այստեղ

դրանց մեթոդապես ճիշտ կազմակերպումն է, աշխատանքի արդյունքների վերլուծությունը։

Այսպիսով, ամփոփելով հարցախույզի արդյունքները՝ մենք եզրակացրինք, որ այս բնագավառում դեռևս շատ աշխատանքներ կան կատարելու։ Մենք կարծում ենք, որ տարրական դասարաններում արդեն աշակերտները պետք է բավական գիտելիքներ ունենան իրենց արմատների, երկրի պատմության մասին և ծանոթ լինեն «քաղաքացի» բառի նշանակությանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Քաղաքացիական դաստիարակության իրականացումը մայրենիի ուսումնական նյութերի միջոցով» հետազոտության վերաբերյալ գրականության ուսումնասիրումը, մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Թեև քաղաքացիական դաստիարակության գործընթացին առնչվող գրականություն հրապարակում շատ կա, սակայն մեթոդական գրականության մեջ գրեթե անդրադարձ չկա այս հիմնախնդրին։
2. Ուսումնասիրելով գործող մայրենիի դասագրքերը՝ պարզեցինք, որ դրանք բավական բազմաբովանդակ են, և նրանց շուրջ աշխատանքները մեծապես կնպաստեն դպրոցականների քաղաքացիական դաստիարակությանը։
3. Աշակերտների քաղաքացիական դաստիարակության գործընթացը արդյունավետ կլինի, եթե մայրենիի դասերի ընթացքում կիրառվեն ուսուցման փոխներգործուն, համագործակցային և իրադրային մեթոդներ, որոնք նրանց կդարձնեն դասի անմիջական մասնակից և հնարավորություն կընձեռեն քաղաքացիական հետաքրքրությունների ձևավորման և ինքնադրսևորման համար՝ նպաստելով աշակերտների ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը, նպատակամղելով ստեղծագործական գործունեության։
4. Քաղաքացիական դաստիարակության իրականացման համար մանկավարժական ողջ գործընթացը պետք է կառուցվի գործընկերային, երկխոսական, համագործակցային, սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների, ինչպես նաև մեթոդական համապատասխան ցուցումների հիման վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան Խ. Երկեր, ՀԴԳ, Երևան, Սովետական գրող, 1984:
2. Աբրահամյան Ա., Մանուկյան Մ., Հարությունյան Ն., Մկրտչյան Ս., Հայ մանկավարժական հանրագիտարան, Երևան, Զանգակ-97, 2006:
3. Ամիրջանյան Յու. Ա, Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն, Երևան, Մանկավարժ. հրատ., 2004:
4. Բրուտյան Վ. Ա., դպրոցականների իրավական դաստիարակությունը՝ որպես իրավախախտումների կանխարգելման ձևերից մեկը, «Մ. Գոշ» համալսարանի գիտամեթոդական աշխատանքների ժողովածու, Վանաձոր, 2003:
5. Հայ մանկավարժներ, Գիրք Ա, (պրոֆ. Ա. Շավարշյանի խմբագրությամբ), Երևան ,1958:
6. Հայ մանկավարժներ, Գիրք Բ, (պրոֆ. Ա. Շավարշյանի խմբագրությամբ), Երևան, 1958:
7. Կարապետյան Հ., Ազգի, ազգայինի և ազգային դաստիարակության հիմնախնդիրները, Երևան, 1999:

Էլեկտրոնային աղբյուրներ

1. https://artsakhlib.am/ru/
2. http://library.khpg.org/files/docs/1380635715.pdf
3. https://lib.armedu.am/
4. https://www.psychologos.ru/articles/view/teoriya-razvitiya-lichnosti-erika-eriksona
5. http://philipok4.narod.ru/Tuser7/Pestalozzi_vol1.pdf